HAL
open science

20-

Vardan Atoyan

To cite this version:

Vardan Atoyan. 20- . Messenger of ASUE, 2017, 2 (46), pp.172-186. hal-03233016v2

HAL Id: hal-03233016
https://hal.science/hal-03233016v2

Submitted on 20 Sep 2021

HAL is a multi-disciplinary open access archive for the deposit and dissemination of scientific research documents, whether they are published or not. The documents may come from teaching and research institutions in France or abroad, or from public or private research centers.

L'archive ouverte pluridisciplinaire **HAL**, est destinée au dépôt et à la diffusion de documents scientifiques de niveau recherche, publiés ou non, émanant des établissements d'enseignement et de recherche français ou étrangers, des laboratoires publics ou privés.

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԴԱՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ իրավագիտության և քաղաքագիտության ամբիոնի դոցենտ,
Չինաստանի Շենսիի մանկավարժական համալսարանի
Կենտրոնական Ասիայի ինստիտուտի հատուկ փորձագետ և իրավիրյալ
պրոֆեսոր, տնտեսագիտության թեկնածու

ՈՒՂԵՂԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՇԱՐԺԸՆԹԱՑԸ 20-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

Հոդվածում ներկայացվում է 20-րդ դարի երկրորդ կեսին ուղեղային կենտրոնների (ՈւԿ) ոլորտի կայացման և զարգացման շարժընթացը: Քննարկվում են այն նախադրյալներն ու շարժառիթները, որոնք նպաստեցին տարբեր երկրներում ՈւԿ ոլորտի աննախադեպ զարգացմանը: Աշխատանքում անդրադարձ է կատարվում առավելապես ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, ԽՍՀՄ-ում և Ճապոնիայում ՈւԿ ոլորտի զարգացման առանձնահատկություններին: Կատարված ուսումնասիրության արդյունքում եզրակացություն է արվում, որ նշված ոլորտի զարգացումը տվյալ երկրում կախված է եղել հանրային քաղաքականության և քաղաքական որոշումների ընդունման գործընթացում ձևավորված ավանդույթներից, քաղաքական փորձագիտության և ՈւԿ ոլորտի նկատմամբ պետության որդեգրած քաղաքականությունից, ինչպես նաև քաղաքական վերնախավի կողմից սահմանված ռազմավարական առաջնահերթություններից:

Հիմնաբառեր. *ուղեղային կենտրոն, վերլուծական կենտրոն, փորձագիտական հանրություն, հանրային քաղաքականություն, պետական կառավարում, քաղաքական փորձագիտություն*
JEL: I23, I39, J44, L30, O34

20-րդ դարի երկրորդ կեսն իրավամբ կարելի է անվանել ուղեղային կենտրոնների (ՈւԿ) վերելքի և քաղաքական փորձագիտության ինստիտուցիոնալ կայացման ժամանակաշրջան: Ներկայումս գործող ՈւԿ-ների ճնշող մեծամասնությունը ստեղծվել է հենց այս ժամանակահատվածում: Միաժամանակ, այդ տարիներին ոլորտում աստիճանաբար ի հայտ են եկել նոր միտումներ, որոնք հաջորդիվ կփորձենք ներկայացնել և վերլուծել:

Այսպես՝ կանադացի գիտնական Լ. Պալը Երկրորդ աշխարհամարտից հետո ՈւԿ-ների բուռն զարգացումը պայմանավորում է երեք հիմնական հանգամանքներով: Դրանցից առաջինը կառավարման գիտության դիրքերի ամրապնդումն է: Խոսքը վերաբերում է մենեջմենթի զարգացման անհրաժեշտության մեջ արևմտյան հասարակության համոզմունքին, ինչը նպաստեց բոլոր կառույցներում (առանձին ձեռնարկությունից մինչև ամբողջ պետություն) առավել արդյունավետ կառավարման կազմակերպմանը: Երկրորդ հանգամանքը հումանիտար գիտությունների նկատմամբ ուշադրության մեծացումն է, ինչի շնորհիվ ձևավորվել էր այն գիտակցությունը, որ որակյալ քաղաքական վերլուծությունը ոչ թե փորձի և հարուստ քաղաքական պրակտիկայի արդյունք է, այլ գիտական տեխնոլոգիաների: Որպես երրորդ հանգամանք Լ. Պալը նշում է հետպատերազմյան շրջանում արևմտյան երկրների տնտեսությունների հաջող զարգացումը[1]:

Հարկ է նշել, սակայն, որ վերոնշյալ հանգամանքները բավարար չեն՝ բացատրելու ՈւԿ ոլորտի նման վերընթաց զարգացումը և մտավոր (ինտելեկտուալ) արտադրանքի նկատմամբ պահանջարկի կտրուկ մեծացումը: Մեր համոզմամբ՝ նշվածներին պետք է ավելացնել «բարդացող» աշխարհի կողմից առաջ քաշվող նորանոր մարտահրավերները, այդ թվում՝ «սառը պատերազմի» իրողությունը, ինչը պետական այրերից շատ հաճախ պահանջում էր գտնել արդյունավետ, արագ և ոչ ստանդարտ լուծումներ: Բացի այդ, անհրաժեշտ է նշել տեղեկատվական հեղափոխության հետևանքով ստեղծված նոր իրականությունը, այդ թվում՝ բազմաթիվ երկրներում տեղեկատվության նկատմամբ պետական մենաշնորհի համեմատական թուլացումը, ինչպես նաև միջազգային հարաբերություններում և քաղաքական գործընթացների աճող բարդությունը, պետական և ոչ պետական դերակատարների ավելացումը և, որպես հետևանք, քաղաքականության տարբեր ոլորտներում մրցակցության մեծացումը: Օրինակ՝ եթե 1950-ական թվականներին աշխարհում գոյություն ուներ ընդամենը 50 պետություն, ապա 20-րդ դարի վերջին՝ շուրջ 200: Մյուս կողմից՝ ի հայտ էին գալիս նորանոր վերազգային կառույցներ և կորպորացիաներ: Միջազգային հարաբերությունների բարդացող խճանկարը, ինչպես նաև բազմաթիվ ներքին ու արտաքին խնդիրներ պահանջում էին քաղաքական արհեստավարժ խորհրդատվություն և ճիշտ ժամանակին մատուցվող վերլուծական տեղեկություններ:

Չնայած ՈւԿ քանակական աճը տեղի էր ունենում բազմաթիվ երկրներում, սակայն, 20-րդ դարի երկրորդ կեսին ԱՄՆ-ի ՈւԿ ոլորտը շարունակում էր մնալ ամենակայացածը թե՛ քաղաքական փորձագիտության ինստիտուցիոնալացման աստիճանով, թե՛ դրանց քանակով և թե՛ երկրի հանրային քաղաքականության մեջ ունեցած դերակատարմամբ: Ինչպես ճշմարտացիորեն նշում է Ս. Տուրոնոկը, մարդկության՝ միջուկային և սառը պատերազմների դարաշրջան մուտքով լայն ճանաչում ստացավ ռազմական և արտաքին քաղաքականության որոշումների պլանավորման գործում գիտական վերլուծության համակարգային կիրառման փորձը: Նման որոշումների ռիսկի գնի կտրուկ բարձրացումը, որը երբեմն չափվում է ոչ միայն միլիարդ դոլարներով, այլև միլիոնավոր մարդկային կյանքերով, որակապես բարձրացրեց ռազմական և արտաքին քաղաքականության ոլորտներում որոշում կայաց-

[1] Տե՛ս **Pal L.,** Public Policy Analisys: An Introduction // Scarborough: Nelson Canada, 1992, էջ 67–68:

նող անձանց պատասխանատվության աստիճանը: Այդպիսի իրավիճակում սեփական սխալների վրա սովորելը անթույլատրելի տարբերակ էր, և ընդունվող որոշումների հետևանքների կանխատեսումը տեղափոխվեց մաթեմատիկական մոդելավորման ոլորտ: 1950-ական թվականներին հենց համաշխարհային ջերմամիջուկային հակամարտության սցենարների մշակումներով, որոնք, ի դեպ, կատարվում էին Պենտագոնի և Սպիտակ տան պատվերով, ԱՄՆ-ում մեծ ճանաչում ստացավ քաղաքական վերլուծության առավել հայտնի և խոշոր կենտրոններից մեկը՝ ՌԷՆԴ կորպորացիան (RAND Corporation): Այդ կորպորացիան վճռական դեր խաղաց այնպիսի մեթոդների մշակման և պետական ու ակադեմիական միջավայրերում տարածման գործում, ինչպիսիք են համակարգային վերլուծությունը, պլանավորման համակարգը, ծրագրավորումն ու բյուջետավորումը (PPBS) և այլն[2]: Կորպորացիայի ազդեցության և հեղինակության մասին է խոսում այն փաստը, որ իր գործունեության առաջին 10 տարիներին հաստատությունը 49 պաշտոնական երաշխավորություն էր ներկայացրել ԱՄՆ-ի ռազմաօդային ուժերի հրամանատարությանը, որոնցից 36-ը ընդունվել էին[3]:

Բացի այդ, ԱՄՆ-ում ՈւԿ ոլորտի բուռն զարգացմանը նպաստում էր պետության կողմից գիտությանը և գիտատեխնիկական մշակումներին տրամադրվող գումարների կայուն ավելացումը: Այսպես՝ Փ. Դիքսոնը ՈւԿ ոլորտի էվոլյուցիայի վերաբերյալ իր հայտնի հիմնարար աշխատանքում նշում է, որ եթե 1940 թ. գիտատեխնիկական մշակումների վրա ԱՄՆ-ի Դաշնային կառավարության ծախսերը կազմում էին 250 մլն ԱՄՆ դոլար, ապա 1948 թ. տրամադրվող գումարն արդեն գրեթե 1 մլրդ ԱՄՆ դոլար էր, 1957-ին՝ 3 մլրդ, 1960-ին՝ 8 մլրդ, իսկ 1967–1971 թթ. ընկած ժամանակահատվածում այդ գումարը գերազանցում էր տարեկան 16 մլրդ ԱՄՆ դոլարը[4]: Մեկ այլ գնահատման համաձայն՝ միայն 1957–1964 թթ. ՈւԿ-ի վրա ծախսվող գումարը 3 մլրդ ԱՄՆ դոլարից հասել էր մինչև 15 մլրդ-ի, իսկ 1960–1970 թթ., ընդհանուր առմամբ, ՈւԿ ոլորտում ծախսվել է ավելի քան 150 մլրդ ԱՄՆ դոլար[5]: Եթե փորձենք պատկերը ներկայացնել մեկ կազմակերպության, դիցուք՝ ՌԷՆԴ կորպորացիայի օրինակով, ապա պետք է նշել, որ հաստատության գոյության առաջին տարում վերջինիս բյուջեն կազմում էր ընդամենը 3750 հազ. ԱՄՆ դոլար, իսկ 1970 թ. արդեն հասել էր 27 մլն ԱՄՆ դոլարի: Միաժամանակ, բազմազանեցվում էին նաև վերջինիս ֆինանսավորման աղբյուրները[6]: Կարելի է պատկերացնել, թե այդ ժամանակների համար դա ինչ ահռելի գումար էր կազմում: Այնուամենայնիվ, նշենք, որ վիետնամական պատերազմի հոգեբարոյական հետևանքները և 1970-ական թվականների սկզբի տնտեսական որոշակի դժվարությունները ամերիկյան հասարակության մեջ էականորեն նվազեցրին առանցքային պետական և, առաջին հերթին, ռազմական ինստիտուտների հեղինակությունը: Հետագայում այս իրավիճակը բացասա-

---

[2] Տե՛ս **Туронок С.Г.,** Политический анализ и прогнозирование: учебник для бакалавриата и магистратуры. М., “Юрайт”, 2016, էջ 38:

[3] Տե՛ս **Smith B.,** The RAND Corporation: Case Study of a Nonprofit Advisory Corporation // Cambridge, Mass.: Harvard University Press, 1966, էջ 202:

[4] Տե՛ս **Диксон П.,** Фабрики мысли // М., ООО “Издательство АСТ”, 2004, էջ 17:

[5] Տե՛ս **Медушевский Н.А.,** Экспертное сообщество в политической сфере в конце XX – начале XXI века // Дис. на соиск. уч. ст. канд. пол. наук. по спец. 23.00.02 – “Политические институты, процессы технологии”. М., 2011, էջ 50:

[6] Տե՛ս **Шейдина И.Л.,** США: “Фабрики мысли” на службе стратегии. М., “Наука”, 1973, էջ 39:

կան իմաստով որոշակիորեն ազդեց նաև ՈւԿ-ի կողմից պետական պատվերի շրջանակներում ֆինանսավորվող աշխատանքների ծավալների վրա:

Հարկ է նշել, որ 1940-ական թվականների երկրորդ կեսից մինչև 1960-ական թթ. ազգային անվտանգության և միջազգային հարաբերությունների ոլորտի ուսումնասիրությունները դեռ շարունակում էին գերակշռող լինել ՈւԿ հետազոտական նախապատվություններում, ինչը, բնականաբար, պայմանավորված էր, մի կողմից՝ ԱՄՆ գլխավորությամբ Արևմուտքի, իսկ մյուս կողմից՝ ԽՍՀՄ գլխավորությամբ խորհրդային ճամբարի երկրների միջև սկիզբ առած «սառը պատերազմի» իրողություններով և բոլոր ոլորտներում ընթացող համընդհանուր մրցավազքով: Այս իրողությունները և ապագայի հնարավոր զարգացումներին պատրաստ լինելու անհրաժեշտությունը լավ նախադրյալներ էին ստեղծում համընդհանուր կանխատեսումներով մասնագիտացված ՈւԿ ստեղծման համար: Հենց այդ նպատակով 1961 թվականին ՌԷՆԴ կորպորացիայից առանձնացած մի խումբ փորձագետներ՝ Հերման Կանը (Herman Kahn), Մաքս Սինգերը (Max Singer) և Օսկար Ռյուբհաուսենը (Oscar Ruebhausen), ստեղծում են Հուդզոնյան ինստիտուտը[7], իսկ 1968 թվականին Ֆորդի հիմնադրամի աջակցությամբ ՌԷՆԴ-ի նախկին աշխատակիցների մեկ այլ խումբ՝ Ապագայի ինստիտուտը[8]:

Հետաքրքրական է նաև, որ 1940-ականներից մինչև 1960-ական թվականները պետությունը շարունակում էր մնալ ՈւԿ մտավոր արտադրանքի հիմնական պատվիրատուն, ինչը նպաստում էր ՌԷՆԴ կորպորացիայի նմանությամբ պայմանականորեն «պայմանագրային» անվանված ուղեղային կենտրոնների ստեղծմանը, որոնց ֆինանսական միջոցները, հիմնականում, գոյանում էին պատվերներից ստացվող եկամուտներից: Մյուս կողմից՝ նման ուղեղային կենտրոնները ֆինանսավորման աղբյուրների թերի բազմազանեցման հետևանքով որոշակիորեն կախվածության մեջ էին պետական մարմիններից:

1960-ական թվականների երկրորդ կեսից ԱՄՆ-ի հանրային կյանքում ակտիվանում են քաղաքացիական շարժումները: Քաղաքացիական հասարակության ամրապնդումը, բազմակարծության մակարդակի բարձրացումը և բոլոր ոլորտներին բնորոշ մրցակցության մեծացումը համապատասխան հիմքեր ստեղծեցին որակապես նոր տեսակի՝ գաղափարայնացված և հասարակական, քաղաքական, սոցիալական տարբեր շերտերի շահերի պաշտպանությանը միտված ուղեղային կենտրոնների ի հայտ գալու համար, որոնց կարճ կարելի է անվանել շահապաշտպան ՈւԿ[9]: Պատահական չէ, որ դրանք հրապարակային էին գործում և առավել ակտիվ էին ՁԼՄ-ների հետ աշխատանքներում: Վերջիններս աչքի էին ընկնում անկախության առավել բարձր մակարդակով, դրանց ֆինանսավորման աղբյուրները առավել բազմազանեցված էին՝ ի տարբերություն պետությունից և պետական պատվերներից կախված այլ ՈւԿ-ի: Շահապաշտպան ՈւԿ-ի գործունեության համար անհրաժեշտ ֆինանսական աղբյուրները գոյանում էին գործարար շրջանակներից, գաղափարակիցների, համախոհների կողմից կատարվող մասնավոր վճարներից, նվիրատվություններից և դրամաշնորհներից ստացվող միջոցներից:

---

[7] Տե՛ս Hudson Institute // URL: http://www.hudson.org/about/history

[8] Տե՛ս Institute for the Future // URL: http://www.iftf.org/what-we-do/history-of-the-future/

[9] Տե՛ս **Վ. Աթոյան,** Ուղեղային կենտրոնների տիպաբանության հարցերը քաղաքագիտական դիսկուրսում // «21-րդ ԴԱՐ», N 1 (71), 2017, էջ 85–102:

Այսպիսով՝ մինչև 1970-ական թվականները ՈւԿ-ի կողմից թողարկվող մտավոր արտադրանքը առավելապես բնութագրվում էր որպես անաչառ և օբյեկտիվ, սակայն հետագայում աստիճանաբար սկսեցին ի հայտ գալ գործառնական իմաստով նոր տեսակի հաստատություններ, որոնք բացահայտորեն հայտարարում էին իրենց քաղաքական և գաղափարախոսական կողմնորոշման մասին և այդ սկզբունքներով էլ գործում էին հանրային քաղաքականության դաշտում: Նման ՈւԿ-ի ներկայացուցիչները ակտիվորեն մասնակցում էին հանրային քաղաքականության տարբեր ոլորտներին առնչվող քննարկումներին, միաժամանակ հրապարակում էին գաղափարայնացված ուսումնասիրություններ, ինչով փորձում էին ուղղորդել տվյալ ոլորտում իրականացվող քաղաքականությունը: Նման մոտեցումը չէր կարող իր ազդեցությունը չունենալ նաև ՈւԿ անաչառության վերաբերյալ մինչ այդ ձևավորված պատկերացումների վրա: Ինչևէ, 1960-ական թվականների վերջերին ԱՄՆ-ում ՈւԿ որոշ փորձագետների հրապարակումներում սկսեց զգացվել հատկապես պահպանողական գաղափարախոսության ազդեցությունը, իսկ արդեն 1973 թ. հիմնվեց առաջին գաղափարայնացված ՈւԿ-ն՝ *Ժառանգություն հիմնադրամը* (The Heritage Foundation): Վերջինս բացահայտ հայտարարում էր իր կողմնորոշման մասին և գործունեության մեջ ու հրապարակումներում հենվում էր պահպանողական գաղափարների վրա: Ինչպես նշված է այդ հաստատության պաշտոնական կայքում, *Ժառանգություն հիմնադրամը* հետազոտական և կրթական հաստատություն է, ուղեղային կենտրոն, որի առաքելությունը պահպանողական հանրային քաղաքականության առաջմղումն է՝ հիմնված ազատ ձեռնարկատիրության սկզբունքների, անհատական ազատությունների, ավանդական ամերիկյան արժեքների և ուժեղ ազգային պաշտպանության վրա[10]: Հարկ է նշել, որ այս հաստատության հիմնադրման սկզբնական կապիտալը տրամադրել էր Կոլորադո նահանգի գարեջրագործական ընկերության ղեկավար Ջոզեֆ Կուրզը[11]: *Ժառանգություն հիմնադրամի* ի հայտ գալը շրջադարձային էր և նոր էջ բացեց ԱՄՆ-ի ուղեղային կենտրոնների պատմության մեջ: Դա առաջին ուղեղային կենտրոնն էր, որ բացահայտորեն հետևողական էր որոշակի քաղաքականության, կուսակցության և գաղափարախոսության առումով՝ ընթացիկ քաղաքականության հարցերի քննարկման վրա ազդեցություն ունենալու ձգտումով և ագրեսիվ քարոզչությամբ[12]:

Հարկ է նշել, որ *Ժառանգություն հիմնադրամի* ազդեցությունը հատկապես զգալի էր ԱՄՆ-ի 40-րդ նախագահ Ռ. Ռեյգանի պաշտոնավարման տարիներին (1981-1989 թթ.)[13]: Այս հաստատության կողմից մշակվել էր՝ «Առաջնորդության մանդատ. պահպանողականների վարչակարգում քաղաքական կառավարումը» գործողությունների պլանը, որը քաղաքական ուղենիշ դարձավ Ռեյգանի վարչակարգի համար՝ սկսած հարկային քաղաքականությունից մինչև ազգային անվտանգության ոլորտ: Բավական է նշել, որ փաստաթղթում առկա շուրջ 2000 երաշխավորությունների մոտ 2/3-ը հավանության արժանացան Ռեյգանի վարչակարգի կողմից:

---

[10] Տե՛ս The Heritage Foundation // URL: http://www.heritage.org/about/our-history/history

[11] Տե՛ս **Рич Э., Уивер К.,** Пропагандисты и аналитики: “мозговые центры” и политизация экспертов // Pro et Contra, том 8, N 2, 2003, էջ 69:

[12] Տե՛ս **Weaver R.K.,** The Changing World of Think Tanks // PS: Political Science and Politics, N 22, 1989, էջ 567:

[13] Տե՛ս **Վ. Աթոյան,** Ազգային անվտանգության հիմնախնդիրներ. դասախոսություններ // Եր., «Տնտեսագետ», 2014, էջ 58:

Ինչպես ճշմարտացիորեն նկատում է Դ. Սթոունը, մինչև 1970-ականները ՈւԿ մեծամասնությունը ձգտում էին ապաքաղաքականացման: Իրենց երաշխավորությունների պատրաստման ընթացքում նրանք մերժում էին որևէ գաղափարախոսական ճնշում: Ուղեղային կենտրոններն իրենց հեռու էին պահում քաղաքական գաղափարայնացվածությունից և հենվում էին սոցիալական ու տնտեսական հիմնախնդիրների գիտական վերլուծության վրա: Վերջիններս փորձում էին լինել անաչառ, անկողմնակալ և գիտական ներդրում ունենալ հանրային քաղաքականության ու հանրային կառավարման ուսումնասիրության ոլորտում: Անաչառությունը և գիտական մոտեցումը շատ կարևոր նշանակություն ունեին իրատեսական քաղաքական քննարկումների ու ՈւԿ-ի նկատմամբ հանրային վստահության համար: Դ. Սթոունի դիտարկմամբ՝ 1970-ական թվականներից հետո ստեղծված ՈւԿ-ում առավել ակնհայտ միտումը դրանց ուղղվածության և մասնագիտացման բազմազանությունն է: ԱՄՆ-ի ՈւԿ հագեցած շուկայում արտադրանքի բազմազանեցումը դառնում է կարևոր[14]: Բացի այդ, եթե Երկրորդ աշխարհամարտից հետո ՈւԿ-ում գերակշռում էին մաթեմատիկոսներն ու ֆիզիկոսները, ապա մեկ տասնամյակ անց արդեն՝ տնտեսագետները, իսկ ավելի ուշ, հետազոտությունների ոլորտում քաղաքական հիմնախնդիրների մասնաբաժնի աճին զուգահեռ, դրական տեղաշարժ նկատվեց՝ հոգուտ հասարակական գիտությունների ներկայացուցիչների[15]:

Այսպիսով՝ այդ տարիներին արձանագրված մյուս կարևոր միտումներից էր քարոզչական, լոբբիստական բնույթի ուղեղային կենտրոնների ի հայտ գալը (advocacy think tanks): Համատեղելով հանրային քաղաքականության ուսումնասիրությունները և ակտիվ մարքեթինգային տեխնոլոգիաները՝ ԱՄՆ-ի քաղաքական համակարգում հիմնարար կերպով փոխվեցին ՈւԿ էությունն ու դերակատարությունը: Փորձագիտական հաստատությունների միջև մրցակցության աճին զուգահեռ, բազմաթիվ ուղեղային կենտրոններ փորձում էին առավել մեծ չափով գրավել հանրության և պետության ուշադրությունն իրենց գործունեության նկատմամբ:

1970–1980-ական թվականներին աստիճանաբար մեծանում էր *ժառանգություն հիմնադրամի* օրինակով ստեղծվող ՈւԿ թիվը, որոնք ունեին հստակ գաղափարախոսական կողմնորոշում, բացահայտորեն հռչակում էին իրենց քաղաքական դիրքորոշումը և միտված էին սեփական գաղափարների քարոզմանը: Դրանք հիմնականում պահպանողական ուղղվածության կազմակերպություններ էին, սակայն ստեղծվում էին նաև ազատական (լիբերալ) և կենտրոնամետ ուղեղային կենտրոններ: Այս կազմակերպությունների աշխատակիցները, որպես կանոն, ունեին համանման գաղափարախոսական հայացքներ, իսկ ղեկավարները հետազոտությունների արդյունքներն օգտագործում էին համապատասխան գաղափարախոսության քարոզչության նպատակով[16]: Այդ շրջանում ստեղծվեցին նաև մի շարք այլ՝ այսօր լավ հայտնի ուղեղային կենտրոններ: Մասնավորապես՝ 1971 թ. մի խումբ պաշտոնաթող զինվորականների կողմից հիմնվում է Պաշտպանական տեղեկատվության կենտրոնը, որի նպատակներից էին ռազմական, պաշտպանական խնդիրնե-

---

[14] Տե՛ս **Stone D.,** Capturing the Political Imagination // Think Tanks and the Policy Process, Portland, Oregon: Frank Class, 1996, էջ 20–21:

[15] Տե՛ս **Шейдина И.Л.,** նշվ. աշխ., էջ 15:

[16] Տե՛ս **Рич Э., Уивер К.,** նշվ. աշխ., էջ 70:

րի վերաբերյալ վերլուծությունների իրականացումը, սեփական մտավոր արտադրանքը հանրության և որոշում կայացնողների շրջանում տարածումն ու քաղաքականության վրա ազդեցության ապահովումը[17]: 1977 թ. ստեղծվում է Կատոնի ինստիտուտը, որը քաղաքական փորձագիտության շուկայում դիրքավորված է որպես լիբերտարիստական հայացքներ կրող և քարոզող ուղեղային կենտրոն, որի սկզբունքներն էին անհատական ազատությունները, ազատ շուկաները, խաղաղությունը և այլն[18]: Ավելի ուշ՝ 1981 թ., դաշնային բյուջեի առաջնահերթությունների, մասնավորապես՝ ցածր եկամուտ ունեցող ամերիկացիների վրա բյուջեի ազդեցության ուսումնասիրության նպատակով ստեղծվում է Բյուջետային և քաղաքականության առաջնահերթությունների կենտրոնը[19]: Բնականաբար, վերոնշյալ ՈւԿ-ով այս շրջանում հիմնված հաստատությունների ցանկը չի սահմանափակվում: Միաժամանակ, ակնհայտ էր դառնում, որ 1970-ական թվականներից սկիզբ է առնում ՈւԿ հիմնման և զարգացման ամենաբուռն ժամանակաշրջանը: Ինչպես նշում է Ջ. Մաք-Գանը, ներկայումս գոյություն ունեցող ՈւԿ 2/3-ը ստեղծվել են 1970 թ., իսկ ավելի քան կեսը՝ 1980 թ. սկսած[20]:

20-րդ դարի երկրորդ կեսին ոլորտի զարգացման մեկ այլ կարևոր միտումը անդրազգային բնույթի ՈւԿ ի հայտ գալն է: Ինչպես նշում է Դ. Սթոունը, իրականում միջազգային ուղեղային կենտրոնների բնույթը երբեմն այնքան էլ հստակ չի դրսևորվում: Եռակողմ հանձնաժողովը ՈւԿ-ի նման կազմակերպություն է, որն իր ձևով վերազգային է: Այս տեսակին կարող են դասվել նաև Հռոմի ակումբը և շվեյցարական Դավոսի Միջազգային տնտեսական ֆորումը[21]:

Որպես օրինակ՝ համառոտ անդրադառնանք նշվածներից Հռոմի ակումբի և Եռակողմ հանձնաժողովի գործունեության ուղղություններին: Այսպես՝ 1968 թ. Հռոմում 30 եվրոպացի գիտնականներ և գործարարներ հավաքվում են քննարկելու համընդգրկուն հիմնախնդիրներ, որի արդյունքում հիմնում են Հռոմի ակումբը[22]: Այս հարթակը միավորեց Արևմուտքի՝ ԱՄՆ-ի և Արևմտյան Եվրոպայի փորձագետներին՝ ամփոփելով միջազգային բնույթի ՈւԿ բնորոշիչները: Ըստ էության, Հռոմի ակումբը դարձավ իր տեսակի մեջ առաջին նման կենտրոնը, որի գործունեության նպատակը համընդգրկուն քաղաքական-տնտեսական և սոցիալ-ժողովրդագրական կանխատեսման ուղղությամբ մշակումների իրականացումն էր: Բացի այդ, թեև ակումբի գործունեությունը մշտապես ուղեկցվել է ազատական-բարեփոխական միտումներով, կազմակերպիչները ձգտում էին գաղափարախոսական անկախության:

---

[17] Տե՛ս Center for Defense Information at POGO // URL: http://pogo.org/straus /?referrer= http://www.cdi.org/

[18] Տե՛ս The Cato Institute // URL: https://www.cato.org/about

[19] Տե՛ս The Center on Budget and Policy Priorities // URL: http://www.cbpp.org/about/mission-history

[20] Տե՛ս **James G. McGann.,** Think Tanks and the Transnationalization of Foreign Policy // "The Role of Think Tanks in U.S. Foreign Policy". U.S. Foreign Policy Agenda (An Electronic Journal of the U.S. Department of State), vol. 7, N 3, 2002, էջ 14: URL: http://www.usembassy-mexico.gov/bbf/ej/1102_RoleThinkTanks.pdf

[21] Տե՛ս **Stone D.,** Think Tanks beyond nation-states // Think tank traditions: Policy research and the politics of ideas, edited by Stone D. and Denham A., Manchester University Press, Manchester and New York, 2004, էջ 36:

[22] Տե՛ս Club of Rome // URL: https://www.clubofrome.org/about-us/history/

1973 թ. հիմնվեց Եռակողմ հանձնաժողովը[23], որը ևս, ինչպես նշվեց, պետք է դասել վերազգային ՈւԿ շարքը: Ավելորդ չէ նշել, որ վերջինս հիմնվել է հայտնի միլիարդատեր Դ. Ռոքֆելերի և ոչ պակաս հայտնի քաղաքագետ Զ. Բժեզինսկու նախաձեռնությամբ: Այս վերազգային հաստատությունը, որը միավորում էր Հյուսիսային Ամերիկայի, Արևմտյան Եվրոպայի և Ճապոնիային հայտնի փորձագետների, քաղաքական և գործարար շրջանակների ներկայացուցիչների, իրականացնում էր քաղաքական ընկերակցության, ուղեղային կենտրոնի և քննարկումների ակումբի գործառույթներ: Եռակողմ հանձնաժողովը մշակեց «եռակողմության» (տրիլատերալիզմ) ուսմունքը, որը հիմնված էր երեք աշխարհագրական կենտրոնների տնտեսապես զարգացած ժողովրդավարությունների վերնախավերի գործունեության վրա և միտված էր գլոբալ քաղաքական ու տնտեսական զարգացման կառավարմանը: Այս հաստատության գաղափարախոսների նպատակն էր միասնություն պահպանել ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող քաղաքականության պլանավորման հարցերում: Ավելացնենք, որ, ի տարբերություն ազգային փորձագիտական կառույցների, որոնց ֆինանսավորումը, որպես կանոն, իրականացվում է իրենց ծագման երկրի ազգային կապիտալով, վերազգային ուղեղային կենտրոնները ֆինանսավորում էին վերազգային կորպորացիաները:

ՈւԿ ոլորտում այդ տարիների զարգացումներից պետք է առանձնացնել նաև ցանցային միավորումների ստեղծումը[24]: Ինչպես նշում է Հ. Ուլրիխը, Տրանսեվրոպական քաղաքականության ուսումնասիրությունների ընկերակցությունը (The Trans European Policy Studies Association - TEPSA) օրինակ է, թե ինչպես է ի սկզբանե ոչ ֆորմալ ցանցը վերածվում ֆորմալ կազմակերպության: TEPSA-ն հիմնվել է 1974 թ. բելգիական The Belgian Groupe d'Etudes Politique Europe'ennes, իտալական The Instituto Affari Internazionali (IAI) և բրիտանական Federal Trust հաստատությունների կողմից: Հաշվի առնելով ընկերակցության անդամների թվի ավելացումը՝ 1990-ական թթ. կեսերին որոշում կայացվեց ստեղծելու առավել ֆորմալ կառույց: Ներկայումս TEPSA-ի մաս են կազմում ԵՄ բազմաթիվ անդամ երկրների ուղեղային կենտրոններ և հետազոտական հաստատություններ: TEPSA-ի նպատակն է նպաստել եվրոպական տարբեր երկրների միջև երկխոսության հաստատմանը[25]:

Հարկ է ավելացնել, որ այս ժամանակաշրջանում ՈւԿ ոլորտի բուռն զարգացումը բնորոշ էր ոչ միայն ԱՄՆ-ին: Այսպես՝ «սառը պատերազմի» իրողությունները, այդ թվում՝ աշխարհաքաղաքական երկու հսկաների միջև սկիզբ առած համընդհանուր մրցավազքը ԽՍՀՄ-ում ևս խթանում էին համապատասխան վերլուծական կառույցների ստեղծումը: Իհարկե, այստեղ գործող վերլուծական կառույցները կազմակերպաիրավական և գործառնական իմաստով էականորեն տարբերվում էին Արևմտյան ՈւԿ-ի համար սահմանված չափանիշներից և, որպես պետական կամ կուսակցական կառույցներ, իշխանական աստիճանակարգային համակարգում ունեին կառուցվածքային

[23] Տե՛ս The Trilateral Commission // URL: http://trilateral.org/page/3/about-trilateral

[24] Տե՛ս **Վ. Աթոյան, Ս. Օհանյան, Ա. Մալքջյան,** Ուղեղային կենտրոնները քաղաքական գործընթացում. «հինգերորդ իշխանություն» // «Բանբեր ՀՊՏՀ», N 1 (41), 2016, էջ 147–157:

[25] Տե՛ս **Ullrich H.,** European Union think tanks: generating ideas, analysis and debate // Think tank traditions: Policy research and the politics of ideas, edited by Stone D. and Denham A., Manchester University Press, Manchester and New York, 2004, էջ 61–62:

ստորաբաժանման կարգավիճակ: Ինչևէ, ԽՍՀՄ-ում ուղեղային կենտրոններին բնորոշ գործառույթներ, որպես կանոն, իրականացնում էին Գիտությունների ակադեմիայի գիտական, փորձագիտական և վերլուծական կառույցները, գերատեսչական պատկանելության գիտահետազոտական ինստիտուտները, պաշտպանության նախարարության և պետական անվտանգության կոմիտեի մասնագիտացված ստորաբաժանումները: Հավելենք նաև, որ 1960-ական թվականներին Խորհրդային Միության կոմունիստական կուսակցության Կենտկոմի միջազգային բաժնում և սոցիալիստական երկրների կոմունիստական և աշխատավորական կուսակցությունների հետ կապերի բաժնում ակադեմիական շրջանակների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորվել էին խորհրդականների խմբեր, որոնք իրականացնում էին հետազոտական, վերլուծական գործառույթներ: Բացի այդ, միջազգային գործընթացների ուսումնասիրության ոլորտում գործում էին Գիտությունների ակադեմիային առընթեր Լատինական Ամերիկայի, Աֆրիկայի, Հեռավոր Արևելքի ինստիտուտը, ԱՄՆ-ի և Կանադայի ինստիտուտները և այլն:

Ինչպես նշում է Դ. Զայցևը, ԽՍՀՄ-ում նման կառույցների հիմնման նպատակը ոչ թե քաղաքական համակարգի ապակենտրոնացումն էր, այլ կուսակցական ղեկավարության առջև ծառացած խնդիրների լուծումը. զարգացած երկրներին հասնելու անհրաժեշտությունը, աշխարհում տեղի ունեցող փոփոխություններին համընթաց քայլելը, առաջին հերթին՝ գիտատեխնիկական ոլորտում: Բացի այդ, Արևմուտքի հետ տնտեսական մրցակցությունը պահանջում էր հիմնավորապես ուսումնասիրել վերջինիս երկրների տնտեսությունն ու քաղաքականությունը[26]:

Անդրադառնալով 20-րդ դարի երկրորդ կեսին այլ երկրներում ՈւԿ ոլորտի զարգացմանը՝ պետք է նշել, որ դրական միտումներ առկա էին նաև բազմաթիվ այլ երկրներում: Հաշվի առնելով այն, որ մենք նախկինում առանձին հրապարակումներով անդրադարձել ենք Չինաստանի[27] և Իսրայելի[28] ՈւԿ ոլորտի կայացման ու զարգացման առանձնահատկություններին, փորձենք համառոտ կերպով ներկայացնել այդ ժամանակաշրջանում մի քանի այլ երկրներում ՈւԿ ոլորտի զարգացման հիմնական միտումները: Ինչպես նշում է Ս. Տուրոնոկը, Եվրոպայի երկրների և Ճապոնիայի կառավարությունները, բացի տնտեսության վերաբերյալ հարցերից, առանձնակի հետաքրքրություն չէին ցուցաբերում փորձագիտական երաշխավորությունների նկատմամբ, ինչը մասամբ բացատրվում է հետպատերազմյան բուռն տնտեսական զարգացմամբ[29]: Ճապոնիայի վերաբերյալ հարկ է հավելել, որ միայն 1960-ական թվականներից այդ երկրում սկսեցին ձևավորվել պետությունից անկախ ուղեղային կենտրոններ: Այսպես՝ 1965 թ. հիմնվեց Նոմուրայի հետազոտական ինստիտուտը[30], 1970 թ.՝ Միցուբիսի հետազոտական ինստիտուտը[31], իսկ 1974 թ. գործարար շրջանակների և ակադեմիական հանրության առաջա-

---

[26] Տե՛ս **Зайцев Д.Г.,** Аналитические центры как субъекты политического процесса // Дис. на соиск. уч. пол. наук., 23.00.02 – "Политические институты, этнополитическая конфликтология, национальные и политические процессы и технологии". М., 2009, էջ 125:

[27] Տե՛ս **Վ. Աթոյան, Շ. Մովսիսյան,** Չինաստանի ուղեղային կենտրոնները // Եր., «Տնտեսագետ», («Ամբերդ» մատենաշար), 2016, 80 էջ:

[28] Տե՛ս **Վ. Աթոյան, Ռ. Թադևոսյան,** Իսրայելի ուղեղային կենտրոնները հանրային քաղաքականությունում // «21-րդ ԴԱՐ», N 6 (70), 2016, էջ 70–84:

[29] Տե՛ս **Туронок С.Г.,** նշվ. աշխ., էջ 39–40:

[30] Տե՛ս Nomura Research Institute. URL: https://www.nri.com/global/company/history.html

[31] Տե՛ս Mitsubishi Research Institute. URL: http://www.mri.co.jp/english/profile/activities/index.html

տար մասնագետների նախաձեռնությամբ, որպես քաղաքականության հետազոտություններով զբաղվող անկախ ուղեղային կենտրոն, ստեղծվում է Առաջատար հետազոտությունների ազգային ինստիտուտը[32]: Նշված երեք հաստատություններն էլ լիովին կարելի է համարել ՈւԿ: Նշենք, որ առաջին երկու հաստատությունները ստեղծվել էին իբրև գործարար վերլուծության և խորհրդատվության գործակալություններ:

1970-ական թվականների ընթացքում կորպորատիվ և բանկային ոլորտներում ևս սկսեցին ի հայտ գալ բազմաթիվ ուղեղային կենտրոններ: 1980-ականների վերջին և 1990-ականների թվականների սկզբին ծավալվեց ՈւԿ ստեղծման նոր ալիք. նախաձեռնողներն էին տեղական ինքնակառավարման մարմինները, որոնք շահագրգռված էին կառավարչական խնդիրների լուծման գործում[33]: Այսպիսով՝ մինչև 1980-ական թվականները Ճապոնիայում դրանք առավելապես կենտրոնացած էին գործարար միջավայրի ուսումնասիրության, նորարարությունների և տնտեսական բնույթի ռազմավարությունների մշակման բնագավառներում՝ ի տարբերություն ամերիկյան ՈւԿ ոլորտի, որտեղ, ի թիվս վերոնշյալների, մեծ տեղ էր հատկացվում նաև քաղաքական վերլուծությանը: Միայն 1990-ական թվականներից Ճապոնիայի ՈւԿ ուշադրության կենտրոնում հայտնվեցին միջազգային հարաբերությունների, արտաքին և ներքին քաղաքականության վերլուծության հետ կապված հարցերը:

Վերոնշյալ հանգամանքը, մեր կարծիքով, պայմանավորված էր մի քանի պատճառներով: Այսպես՝ արտաքին քաղաքականության նկատմամբ ուշադրության մեծացումը կարելի է պայմանավորել այդ տարիներին Կորեական թերակղզում լարվածության աճով, մասնավորապես՝ Կորեայի Ժողովրդա-դեմոկրատական Հանրապետության միջուկային ծրագրի շուրջ ստեղծված իրավիճակով և հզորացող Չինաստանի տնտեսական ազդեցության մեծացմամբ: Այնուամենայնիվ, հետագայում ևս Ճապոնական ՈւԿ-ում տնտեսական ոլորտի ուսումնասիրությունները գերակշռում էին քաղաքականի նկատմամբ: Ընդհանուր առմամբ, Ճապոնիայում այս ոլորտը առավելապես զբաղվում է կորպորացիաների պատվերով տնտեսական բնույթի ուսումնասիրությունների իրականացմամբ և խորհրդատվական ծառայությունների մատուցմամբ: Ճապոնական ՈւԿ ռազմավարական առաջնահերթություններում քաղաքականության ոլորտի երկրորդային նշանակությունը կարելի է բացատրել արտաքին քաղաքականության բնագավառում պետության որդեգրած սկզբունքներով և միջազգային հարաբերություններում ունեցած հավակնություններով: Հայտնի է, որ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Ճապոնիայում գործում է ռազմական ուժերը արտերկրում կիրառելու սահմանադրական սահմանափակումը և արտաքին քաղաքականությունում ռազմական ուժի չկիրառման սկզբունքը: Այդ պատճառով ճապոնական ՈւԿ-ի կողմից քաղաքականության ոլորտի ուսումնասիրությունները հիմնականում սահմանափակվում են տարածաշրջանային և ներպետական գործընթացների վերլուծությամբ:

Անդրադառնալով եվրոպական երկրներում ՈւԿ ոլորտի զարգացման առանձնահատկություններին՝ նշենք, որ այստեղ առավել հետաքրքիր և զարգացած համակարգ էր ձևավորվել Մեծ Բրիտանիայում: Եթե Գերմա-

---

[32] Տե՛ս Nippon Institute for Research Advancement. URL: http://www.nira.or.jp/english/index.html
[33] Տե՛ս **Медушевский Н.А.,** նշվ. աշխ., էջ 75:

նիայում ուղեղային կենտրոններն առավելապես ստեղծվում և զարգանում էին կուսակցական կազմակերպություններին կից, իսկ Ֆրանսիայում փորձագետները անհատական մակարդակով ներառված էին պետական կառավարման համակարգում[34], ապա Մեծ Բրիտանիայում դրանք աչքի էին ընկնում գործառույթների, մասնագիտացումների և տիպաբանության բազմազանությամբ, ինչով բրիտանական ՈւԿ ոլորտը, շատ առումներով, նմանվում էր ամերիկյանին: Բրիտանական ՈւԿ ոլորտի զարգացումը հատկապես մեծ թափ հավաքեց 1970-ական թվականների վերջերից, որը շարունակվեց 1980-ական թվականներին, երբ վարչապետ դարձավ Մարգարետ Թեթչերը: Այդ տարիներին ստեղծված կենտրոններից պետք է առանձնացնել Ադամ Սմիթի ինստիտուտը, որն այսօր էլ համարվում է ներքին տնտեսական քաղաքականության ուսումնասիրության ոլորտում աշխարհի առաջատար ՈւԿ-ից մեկը[35]: Այս հաստատության փորձագետների կողմից մշակված բազմաթիվ նախագծեր, ինչպես օրինակ՝ փոստային ծառայության մասնավորեցումը, ներառվեցին Մ. Թեթչերի կառավարության նախաձեռնած բարեփոխումների փաթեթում: Բացի այդ, 1974 թ. ստեղծված Քաղաքականության ուսումնասիրության կենտրոնը, որի համահիմնադիրը Մ. Թեթչերն էր (մյուս համահիմնադիրը՝ Քեյթ Ջոզեֆը)[36], երկար տարիներ հանդես էր գալիս որպես երկրի պահպանողական կուսակցության քաղաքական և ծրագրային հարթակ: Այս հաստատությունը ևս մեծապես ներգրավված էր Թեթչերի կառավարության սոցիալ-տնտեսական ոլորտին առնչվող փաստաթղթերի մշակման գործում: Քաղաքականության ուսումնասիրության կենտրոնում է մշակվել «Stepping Stones» հայտնի զեկույցը, որում, մասնավորապես, ամփոփվում էր արհմիությունների հետ փոխգործակցության ռազմավարությունը[37]: Հարկ է ավելացնել, որ, բացի Քաղաքականության ուսումնասիրության կենտրոնից, բրիտանական պահպանողական կուսակցության համապատասխան փաստաթղթերի մշակման գործում ներգրավված էր նաև 1955 թ. ստեղծված Տնտեսական հարաբերությունների ինստիտուտը[38]:

Ինչ վերաբերում է այլ քաղաքական հոսանքներին հարող բրիտանական ՈւԿ-ին, ապա պետք է նշել, որ ձախ քաղաքական հայացքներով աչքի էր ընկնում 1988 թ. հիմնված Հանրային քաղաքականության հետազոտությունների ինստիտուտը, որի ուսումնասիրության շրջանակն ընգրկում էր եվրոմիասնացման, կրթության, շրջակա միջավայրի պահպանության, գնագոյացման և բազմաթիվ այլ ոլորտներ[39]: Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունն, իր հերթին, օգտվում էր Սոցիալական շուկայի հիմնադրամի (Social Market Foundation) թողարկած մտավոր արտադրանքից: 1980–1990-ական թվականների զանգվածային սոցիալական վերափոխումների շրջանում ուղեղային կենտրոնները միայն ավելացնում էին իրենց ազդեցությունը: Հետագայում Թ. Բլերի ղեկավարությամբ իշխանության եկած լեյբորիստները կրկնեցին նոր գաղափարախոսական ծրագրահենքի մշակման նախորդների

---

[34] Տե՛ս **Վ. Աթոյան,** Պետություն-փորձագիտական հանրություն փոխգործակցությունը ազգային անվտանգության համատեքստում // «21-րդ ԴԱՐ», N 4 (68), 2016, էջ 25–39:
[35] Տե՛ս Adam Smith Institute. URL: https://www.adamsmith.org/about-the-asi/
[36] Տե՛ս Center for Policy Studies. URL: http://www.cps.org.uk/about/history/
[37] Տե՛ս Stepping Stones Report. URL: http://www.cps.org.uk/files/reports/original/111026104730-5B6518B5823043FE9D7C54846CC7FE31.pdf
[38] Տե՛ս Institute of Economic Affairs. URL: https://iea.org.uk/about-us
[39] Տե՛ս Institute of Public Policy Research. URL: http://www.ippr.org/about/history

փորձը: Նման վերաիմաստավորման արդյունքը դարձավ նոր լեյբորիստների հայեցակարգը, որի մշակման գործում ՈւԿ-ը նույնպես մասնակցում էին[40]:

20-րդ դարի երկրորդ կեսին ՈւԿ ոլորտի զարգացման մյուս կարևոր միտումը, որը կարելի է առանձնացնել, 1980–1990-ական թվականներին ստեղծված նոր տեսակի ուղեղային կենտրոններն էին, որոնք հիմնված էին քաղաքական ժառանգության վրա (Legacy-based Think Tanks): Նման ՈւԿ, որպես կանոն, ստեղծվում էին պետությունների նախկին առաջին դեմքերի կամ բարձրաստիճան պաշտոնյաների կողմից, որոնց նպատակն էր շարունակել իրենց ազդեցությունը երկրի արտաքին ու ներքին քաղաքականության վրա: Ռ. Թրոեստրը նման կազմակերպություն է համարում Էմորի համալսարանին կից գործող Ջ. Քարտերի կենտրոնը (Jimmy Carter Center at Emory University) և Հանուն խաղաղության ու ազատության Ռ. Նիքսոնի կենտրոնը[41]: Հետխորհրդային տարածքում ամենահայտնի օրինակներից կարելի է նշել 1991 թ. դեկտեմբերին ԽՍՀՄ վերջին ղեկավարի կողմից ստեղծված Սոցիալ-տնտեսական և քաղաքագիտական հետազոտությունների միջազգային հիմնադրամը (Գորբաչովի հիմնադրամ): Հատկանշական է, որ այս հաստատությունը դարձավ հետխորհրդային տարածքի՝ ժամանակակից հասկացությամբ առաջին ՈւԿ-ից մեկը[42]: Հետագայում նախկին բարձրաստիճան պետական պաշտոնյաների և քաղաքական գործիչների կողմից ՈւԿ-ի ստեղծման ավանդույթը տարածվեց նաև հետխորհրդային երկրներում, այդ թվում՝ Հայաստանում[43]:

Ամփոփելով կարող ենք նշել, որ 20-րդ դարի երկրորդ կեսն ամբողջ աշխարհում ուղեկցվեց ՈւԿ ոլորտի աննախադեպ զարգացմամբ: Ի հայտ էին գալիս որակապես, ինստիտուցիոնալ և գործառնական առումներով նոր տեսակի ուղեղային կենտրոններ: Միաժամանակ, նկատելի էր դառնում ՈւԿ ֆինանսավորման աղբյուրների բազմազանեցման միտումը, ինչով էականորեն նվազում էր վերջիններիս կախվածությունը մեկ աղբյուրից ստացվող պատվերներից: Շարունակում էր զարգանալ բարեգործության-նվիրատվության ավանդույթը, և նկատելի էր դառնում նախորդ դարասկզբի ապագաղափարայնացված հաստատություններից աստիճանական, սահուն անցումը գաղափարայնացված ՈւԿ-ին: Կարևոր երևույթ էր նաև քաղաքական փորձագիտության շուկայում վերազգային և ցանցային ուղեղային կենտրոնների հայտնվելը, որոնք հետագա զարգացումն ունեցան նաև 21-րդ դարում: Բացի այդ, եթե դարասկզբին ՈւԿ-ը առավելապես կենտրոնացած էին միջազգային հարաբերությունների, ավելի ուշ՝ ազգային անվտանգության ոլորտի ուսումնասիրության բնագավառներում, ապա հետագայում վերջիններիս միջգիտակարգային հետազոտությունների շրջանակն էականորեն ընդլայնվեց՝ ներառելով բնապահպանական, հասարակական-քաղաքական տարբեր շերտերի շահերի պաշտպանության և հանրային քաղաքականությանն առնչվող բազմաթիվ այլ ոլորտների ուսումնասիրություններ: 20-րդ դարի երկրորդ

---

[40] Տե՛ս **Бордовских А.,** Региональный обзор: Европа // Атлас аналитических центров: русистка за рубежом. Rethinking Russia, 2016, էջ 57:

[41] Տե՛ս **Troester R.,** Jimmy Carter as Peacemaker: A Post-Presidential Biography // R. Troester. New York: Praeger Publishers, 1996, էջ 33:

[42] Տե՛ս Международный Фонд социально-экономических и политологических исследований (Горбачев-Фонд). URL: http://www.gorby.ru/gorbi_fund/about/

[43] Տե՛ս **Атоян В.,** Индустрия «мозговых центров» в Армении // “Проблемы национальной стратегии”, N 4 (37), 2016, էջ 158–176:

կեսի ՈւԿ ոլորտի զարգացման շարժընթացի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ այդ բնագավառի զարգացումը տվյալ երկրում կախված է եղել հանրային քաղաքականության և քաղաքական որոշումների ընդունման գործընթացում ձևավորված ավանդույթներից, քաղաքական փորձագիտության նկատմամբ պետության որդեգրած քաղաքականությունից, ինչպես նաև քաղաքական վերնախավի կողմից սահմանված ռազմավարական առաջնահերթություններից:

Օգտագործված գրականություն

1. Աթոյան, Վ. (2017). Ուղեղային կենտրոնների տիպաբանության հարցերը քաղաքագիտական դիսկուրսում. *«21-րդ ԴԱՐ»*, *1* (71), 85-102:
2. Աթոյան, Վ. (2016). Պետություն-փորձագիտական հանրություն փոխգործակցությունը ազգային անվտանգության համատեքստում. *«21-րդ ԴԱՐ»*, *4* (68), 25-39:
3. Աթոյան, Վ. (2014). *Ազգային անվտանգության հիմնախնդիրներ (դասախոսություններ)*. Եր., «Տնտեսագետ», 154 էջ:
4. Atoyan, V., Ohanyan, S., Malkjyan, A. (2016). Ուղեղային կենտրոնները քաղաքական գործընթացում. «հինգերորդ իշխանություն». *Messenger of ASUE*, *1* (41), 147-157. ⟨hal-03282273⟩
5. Աթոյան, Վ., Մովսիսյան, Շ. (2016). *Չինաստանի ուղեղային կենտրոնները*. Եր., «Տնտեսագետ», 80 էջ:
6. Աթոյան, Վ., Թադևոսյան, Ռ. (2016). Իսրայելի ուղեղային կենտրոնները հանրային քաղաքականությունում. *«21-րդ ԴԱՐ», 6* (70), էջ 70-84:
7. Атоян, В. (2016). Индустрия «мозговых центров» в Армении. *“Проблемы национальной стратегии”, 4* (37), 158-176.
8. Бордовских А., Региональный обзор: Европа // Атлас аналитических центров: русистка за рубежом. Rethinking Russia, 2016.
9. Диксон П., Фабрики мысли // М., ООО “Издательство АСТ”, 2004.
10. Зайцев Д.Г., Аналитические центры как субъекты политического процесса // Дис. на соиск. уч. ст. канд. пол. наук., 23.00.02 – “Политические институты, этнополитическая конфликтология, национальные и политические процессы и технологии”. М., 2009.
11. Медушевский Н.А., Экспертное сообщество в политической сфере в конце XX – начале XXI века // Дис. на соиск. уч. ст. канд. пол. наук. по спец. 23.00.02 – “Политические институты, процессы тех- нологии”, М., 2011.
12. Международный Фонд социально-экономических и политологических исследований (Горбачев-Фонд). URL: http://www.gorby.ru /gorbi_fund/about/
13. Рич Э., Уивер К., Пропагандисты и аналитики: “мозговые центры” и политизация экспертов // Pro et Contra, том 8, N 2, 2003.
14. Туронок С.Г., Политический анализ и прогнозирование: учебник для бакалавриата и магистратуры // М., “Юрайт”, 2016.
15. Шейдина И.Л., США: “Фабрики мысли” на службе стратегии // М., “Наука”, 1973.
16. Adam Smith Institute. URL: https://www.adamsmith.org/about-the-asi/
17. Center for Policy Studies. URL: http://www.cps.org.uk/about/history/
18. Center for Defense Information at POGO // URL: http://pogo.org/straus/?referrer=http://www.cdi.org/
19. Club of Rome // URL: https://www.clubofrome.org/about-us/history/
20. Hudson Institute // URL: http://www.hudson.org/about/history
21. Institute for the Future // URL: http://www.iftf.org/what-we-do/history-of-the-future/

22. Institute of Economic Affairs. URL: https://iea.org.uk/about-us
23. Institute of Public Policy Research. URL: http://www.ippr.org/about/history
24. James G. McGann, Think Tanks and the Transnationalization of Foreign Policy // “The Role of Think Tanks in U.S. Foreign Policy”. U.S. Foreign Policy Agenda (An Electronic Journal of the U.S. Department of State), Vol. 7, N 3, 2002. URL: http://www.usembassy-mexico.gov/bbf/ej/1102_RoleThinkTanks.pdf
25. Mitsubishi Research Institute. URL: http://www.mri.co.jp/english/profile /activities /index.html
26. Nippon Institute for Research Advancement. URL: http://www.nira.or.jp /english/index.html
27. Nomura Research Institute. URL: https://www.nri.com/global/company /history.html
28. Pal L., Public Policy Analisys: An Introduction // Scarborough: Nelson Canada, 1992.
29. Stone D., Capturing the Political Imagination // Think Tanks and the Policy Process, Portland, Oregon: Frank Class, 1996.
30. Stone D., Think Tanks beyond nation-states // Think tank traditions: Policy research and the politics of ideas, edited by Stone D. and Denham A., Manchester University Press, Manchester and New York, 2004.
31. Smith B., The RAND Corporation: Case Study of a Nonprofit Advisory Corporation // Cambridge, Mass.: Harvard University Press, 1966.
32. Stepping Stones Report. URL: http://www.cps.org.uk/files/reports /original/111026104730-5B6518B5823043FE9D7C54846CC7FE31.pdf
33. The Cato Institute // URL: https://www.cato.org/about
34. The Center on Budget and Policy Priorities // URL: http://www.cbpp.org/about/mission-history
35. The Heritage Foundation // URL: http://www.heritage.org/about/our-history/history
36. The Trilateral Commission // URL: http://trilateral.org/page/3/about-trilateral
37. Troester R., Jimmy Carter as Peacemaker: A Post-Presidential Biography // R. Troester. New York: Praeger Publishers, 1996.
38. Ullrich H., European Union think tanks: generating ideas, analysis and debate // Think tank traditions: Policy research and the politics of ideas, edited by Stone D. and Denham A., Manchester University Press, Manchester and New York, 2004.
39. Weaver R.K., The Changing World of Think Tanks // PS: Political Science and Politics, N 22, 1989.

ВАРДАН АТОЯН
*Доцент кафедры Правоведения и политологии АГЭУ,
приглашенный профессор и специальный эксперт Института
Центральной Азии ШПУ (КНР), кандидат экономических наук*

Динамика развития индустрии мозговых центров во второй половине 20-го века.– В статье рассматривается динамика становления и развития индустрии мозговых центров (МЦ) во второй половине 20-го века. Анализируются предпосылки и мотивации, которые способствовали беспрецедентному развитию индустрии МЦ в разных странах. В работе в основном акцентируются особенности развития индустрии МЦ в США, Великобритании, СССР и Японии. На основе анализа делается вывод, что развитие сферы МЦ в каждой конкретной стране зависит от сформированных традиций в сфере публичной политики и в процессе принятия политических решений, в том числе от государственной политики по отношению к индустрии МЦ, а также от стратегических приоритетов, установленных политической элитой.

Ключевые слова: *мозговой центр, экспертное сообщество, публичная политика, государственное управление, политический процесс, политическая экспертиза.*
JEL: I23, I39, J44, L30, O34

VARDAN ATOYAN
*Associate Professor at the Chair of Law and Political Science at ASUE,
Visiting Professor and Special Expert at Central Asia
Institute within Shaanxi Normal University, PhD in Economics*

The Dynamics of the Development of Think Tank Industry in the Second Half of the 20th Century.– The present article introduces the dynamics of the formation and development of Think Tank industry in the second half of the twentieth century. The prerequisites and motivations, which have contributed to the unprecedented development of Think Tank sphere in different countries are also touched upon. The study mainly refers to the features of the development of Think Tank industry in the USA, Great Britain, USSR and Japan. The study concludes that the development of Think Tank industry in each specific country depends on the traditions of the public policy and political decision making process, political expertise and the state policy regarding Think Tank industry, as well as the strategic priorities defined by the political elite.

Key words: *think tank, experts' society, public policy, public administration, political process, political expertise.*
JEL: I23, I39, J44, L30, O34